Քաղվածք
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Բաժնետերերի Տարեկան Ժողովի
22.04.2010թ. N 2
Արձանագրությունից

***ք. Երևան***
***ժ. 15.00***
***/Երևանի ժամանակով/***

Ներկա էին Ընկերության՝ թվով 26 900 ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնետերերը.

1. «Ուկրպրոմբանկ» ՍՊԸ՝ -3 500 հատ բաժնետոմս /13,01%/
   Լուծարիչ՝ Կոնստանտին Ռանսկի

2. «Քրիստի Մենեջմենթ» Ընկերություն՝ -23 400 հատ բաժնետոմս /86,99%/
   Գործադիր տնօրեն՝ Արայիկ Չիրկինյան

Ընդհանուր Ժողովի նախագահ՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Հակոբյան, քարտուղար՝ Մ. Ստեփանյան:

ՕՐԱԿԱՐԳ.

1. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների բաշխման հաստատում: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում:
2. Չբաշխված շահույթի մասհանման հաստատում գլխավոր պահուստին:

***<u>Օրակարգի երկրորդ հարցով՝</u>***
ԼՍԵՑԻՆ.

Խորհրդի նախագահ Արմեն Հակոբյանը ներկայացրեց «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2009թ. տարեկան գործունեության արդյունքները, բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2009թ. ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի կողմից տրված եզրակացությունը հաշվապահական հաշվառման ստանդարտների համապատասխան:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

*<u>Հարցը դրվեց քվեարկության</u>*

1. «Ուկրպրոմբանկ» ՍՊԸ - կողմ
2. «Քրիստի Մենեջմենթ» Ընկ. - կողմ

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ՄԻԱՁԱՅՆ.

***<u>Օրակարգի երրորդ հարցով՝</u>***
ԼՍԵՑԻՆ.

Խորհրդի նախագահ Արմեն Հակոբյանին, որն առաջարկեց ընկերության հաշվետու ժամանակաշրջանի շահույթի 5% ուղղել գլխավոր պահուստի համալրմանը, իսկ մնացորդը՝ նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Չվճարել ընկերության բաժնետոմսերի դիմաց 2009թ. տարեկան շահութաբաժինը, 2009թ. ընթացքում ստացված շահույթի 5% ուղղել գլխավոր պահուստի համալրմանը, իսկ մնացորդը՝ նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթին: Ընկերության նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը բաշխել բաժնետերերի միջև իրենց բաժնեմասի համապատասխան, շահույթը բաշխելու ժամկետները և կարգը սահմանել Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ:

*<u>Հարցը դրվեց քվեարկության</u>*

1. «Ուկրպրոմբանկ» ՍՊԸ - կողմ
2. «Քրիստի Մենեջմենթ» Ընկ. - կողմ

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ՁԱՅՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՄԲ.

Ժողովի նախագահող՝ Ա. Հակոբյան
Ժողովի քարտուղար՝ Մ. Ստեփանյան

Խորհրդի քարտուղար՝ Ա. Ստեփանյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ստեփանյան